Մաքուր Մտածելակերպ Դժվարությունների Վերաբերյալ

Մաքուր Մտածելակերպ Մաս 1

«Ամեն բանում նեղված ենք, բայց ճնշված չենք, կարոտյալ ենք, բայց հուսահատ չենք, հալածված ենք, բայց լքված չենք, անկյալ ենք, բայց կորսված չենք:» Բ Կորնթացիս 4:8-9

Մաքուր մտածելակերպ ունենալու գաղտնիքը

«Տեսանելի բաներին չենք նայում, այլ անտեսանելիներին, որովհետև տեսանելի բաները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական:» Բ Կորնթացիս 4:18

1. Երբ իրավիճակը թվում է ճնշող, մտածիր Աստծո բարության մասին

«Հաստատ հավատում եմ, որ պիտի տեսնեմ Տիրոջ բարությունը ողջերի երկրում...թող սիրտդ պինդ և զորավոր լինի, և սպասի՛ր Տիրոջը:» Սաղմոս 27:13-14

«Որքա՜ն մեծ է քո բարությունը, որ պահեցիր քեզնից երկյուղածների համար և անում ես նրանց համար, որոնք հուսացել են քեզ մարդկանց որդիների առջև:» Սաղմոս 31:19

2. Երբ իրավիճակը թվում է պարտվողական, մտածիր Աստծո հզորության մասին

«Մեծ է մեր Տերը և շատ զորավոր, նրա իմաստությանը չափ չկա:» Սաղմոս 147:5

«Ո՜վ Աստված, քո առատ ողորմության համար լսի՛ր ինձ քո փրկության ճշմարտությամբ: Հանի՛ր ինձ ցեխից, որ չթաղվեմ...Թող ջրերի հորձանքը չհափշտակի ինձ...» Սաղմոս 69:13-15

«Ահա ես եմ Տերը՝ ամեն մարմնի Աստվածը. մի՞թե ինձ համար որևէ դժվար բան կա:» Երեմիա 32:27

3. Երբ իրավիճակը թվում է մռայլ, մտածիր Աստծո մոտիկության մասին

«Ալելուիա՜: Երանելի է այն մարդը, որ վախենում է Տիրոջից և շատ է հավանում նրա պատվիրանները: ...Խավարի մեջ լույս է ծագում ուղիղների համար...նա հավիտյան չպիտի սասանվի. արդարը պիտի լինի հավիտենական հիշատակի համար: Չար համբավից նա չի վախենալու, նրա սիրտը պատրաստ է, որ իր հույսը Տիրոջ վրա դնի: Հաստատուն է նրա սիրտը և չի վախենալու, մինչև չտեսնի իրեն նեղողների կորուստը:» Սաղմոս 112:1-8

«Տերը մոտիկ է սիրտը կոտրվածներին և փրկում է վշտաբեկ հոգիներին:» Սաղմոս 34:18

«Սպասի՛ր Տիրոջը և պահի՛ր նրա ճանապարհը, և նա կբարձրացնի քեզ, որ ժառանգես երկիրը:» Սաղմոս 37:34

Հաջորդ քարոզի թեման
«Մաքուր մտածելակերպ փոխհարաբերությունների վերաբերյալ»
Հովիվ Սարո Խաչիկեան